ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԸ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՕՆԻԿ ԳԱԼԻԿՅԱՆ

Հանցավորության սոցիոլոգիական հետազոտությունների համակարգում քրեաիրավական պրոբլեմների սոցիոլոգիական հետազոտությունների տեգի հարցի լուծումը հնարավորություն է տալիս այդ հետազոտությունների խնդիրը գնել գիտության որոշակի ճյուղի առջև։ Նման մոտեցումը մարդկային իմացության նոր առաջացող ձևերի համար հանդիսանում է դրանց իրացման յուրատեսակ նյութական ապահովումը, քանի որ գիտության համապատասխան ճյուղի գիտական ուժերը և պոտենցիալը դրանով իսկ ներգրավվում են այդ հետազոտությունների կատարման համար։

Քրեաիրավական պրոբլեմների սոցիոլոգիական ուսումնասիրման տեղի հարցի լուծումը կախված է այն բանից, թե թույլատրելի՞ է արդյոք նման հետազոտությունը սովետական քրեական իրավագիտության շրջանակներում և թե գա արդյոք հանցագործությունների դեմ մղվող պայքարի հարցերն ուսումնասիրող որևէ այլ առարկայի մենաշնորհը չէ՞։

Իրավաբանական մասնագիտական գրականության մեջ այդ պրոբլեմների լուծման գործում կան հակասական կարծիքներ։ Ինչպես իրավացիորեն նշել է Ա. Գերցենզոնը[1], ժամանակակից քրեաիրավական հետազոտություններում նկատվում է բավական հետաքրքիր պատկեր։ Մի կողմից նշվում է քրեական իրավունքի պրոբլեմները հետազոտելիս իրավաբանական ու սոցիոլոգիական կողմերը զուգակցելու անհրաժեշտությունը և ամեն կերպ խարազանվում է հետազոտման ձևական-դոգմատիկ մեթոդով միակողմանիորեն տարվելը, մյուս կողմից՝ քրեական իրավունքի կոնկրետ նորմերն ու ինստիտուտներն ուսումնասիրելիս հեղինակները հաճախ սահմանափակվում են հետազոտվող կատեգորիաների տրամաբանական-իրավաբանական վերլուծությամբ։ Նման մոտեցում առանձնապես պարզորոշ նկատվում է սովետական քրեական իրավունքի հատուկ մասին նվիրված մի շարք հետազոտություններում։ Այսպես, 1971 թ. հրատարակված սովետական քրեական իրավունքի դասագրքի հատուկ մասի առաջաբանում գրված է. «...սովետական քրեական իրավունքի հատուկ մասի նորմերի իսկական բովանդակության բացահայտումը հնարավոր է միայն այդ նորմերի սոցիալ-քաղաքական նշանակությունը պարզելու դեպքում», որն իր հերթին ենթադրում է պարզել «սովետական օրենսդրությամբ այդ նորմերի ընդունումը պայմանավորող պատճառները...։ Սովետական քրեական իրավունքի հատուկ մասի նորմերի

---

[1] А. А. Герцензон, Уголовное право и социология, М., 1970, стр. 30—34.

ուսումնասիրման ու կիրառման ձևական-դոգմատիկ մեթոդը տեղ չպետք է ունենա ո՛չ տեսության մեջ, ո՛չ էլ պրակտիկայում»[2]։

Թվում է թե այս համոզիչ հայտը պետք է իրացված լիներ դասագրքում։ Սակայն, ծանոթանալով դրան, նկատում ենք սովետական քրեական իրավունքի հատուկ մասի քննարկվող նորմերի սոցիոլոգիական հետազոտման բացակայություն։

Ավելին, սովետական իրավաբանական գրականության մեջ կա նաև այն կարծիքը, որ «իրավունքի դոգման ինքնըստինքյան սոցիալական բարդ սահմանում է, որ գիտության այն ճյուղը, որն իրեն կնվիրի միայն և բացառապես դրա ուսումնասիրմանը, արդեն լիակատար և անվիճելի իրավունք կունենա իրեն դասելու գիտության շարքը»[3]։ Այս կարծիքն արտահայտած Մ. Կովալյովը քրեական իրավունքի պրոբլեմների սոցիոլոգիական վերլուծության անտեսումը համարում է նորմա այդ գիտության համար։ Քրեաիրավական հետազոտությունների բնույթի վերաբերյալ նշված տեսակետների իրացումը օբյեկտիվորեն կնշանակեր մի քայլ ետ սովետական իրավագիտության մեջ։ Սակայն, այնուամենայնիվ, քրեաիրավական հետազոտությունների սոցիոլոգիական կողմերի նկատմամբ ժխտողական վերաբերմունքը, որը մինչև այժմ գոյություն ունի մասնագետների մի մասի մոտ, անհիմն կլիներ, եթե բավականաչափ մշակված լիներին քրեական իրավունքի սոցիոլոգիայի տեսական պրոբլեմները։

Քրեական իրավունքի պրոբլեմների ներկայումս կատարվող սոցիոլոգիական հետազոտությունների մեծ մասի առանձնահատկությունն այն է, որ դրանք զարգանում են իրավական առանձին նորմերի և ինստիտուտների կոնկրետ սոցիոլոգիական վերլուծության գծով։ Թեև մասնագիտական գրականության մեջ կան հատկապես այդ պրոբլեմին նվիրված առանձին աշխատություններ[4], և քրեաբանության առարկայի բովանդակության ու գիտությունների համակարգում նրա գրաված տեղի խնդիրը անխուսափելիորեն բարձրացնում է նաև քրեական իրավունքի սոցիոլոգիայի հարցը[5], այնուամենայնիվ քրեական իրավունքի սոցիոլոգիայի տեսական պրոբլեմների մշակվածության վիճակը կարելի է համարել սաղմնային։ Բավական է ասել, որ տակավին միասնական կարծիք չկա քրեական իրավունքի սոցիոլոգիայի առարկայի բովանդակության, այսինքն հատարակության կյանքի այն երևույթների բնութագրման մասին, որոնք կարող են կազմել քրեաիրավական հետազոտության այդ տեսակի օբյեկտը, ինչպես նաև՝ քրեական իրավունքի ու քրեաբանության առարկայի հետ նրա հարաբերակցության մասին։ Հավանաբար դա կարելի է անել սոցիոլոգիայի, քրեական իրավունքի ու քրեաբանության առարկաների բովանդակությունը և նրանց հնարավոր փոխներթափանցումն ու փոխազդեցությունը պարզելու միջոցով։

---

2 «Советское уголовное право, Особенная часть», М., 1971, стр. 12—13.

3 М. И. Ковалев, Советская криминология-правоведение или социология? («Правоведение», 1970, № 6, стр. 85).

4 «Исправительные работы и их эффективность», М., 1967; «Эффективность уголовноправовых мер борьбы с преступностью», М., 1968; А. А. Герцензон, *նշվ. աշխ.*, «Эффективность применения уголовного закона», М., 1973.

5 В. Н. Кудрявцев, Социология, право, криминология («Советское государство и право», 1969, № 2); М. И. Ковалев, *նշվ. աշխ.*

Սոցիոլոգիայի և իրավունքի հարաբերակցությունը քննելիս ամենից առաջ պետք է նշել, որ «սոցիոլոգիան զարգացել է որպես գիտություն՝ ինքնաբերաբար առաջացող սոցիալական պրոցեսների և ինքնաբերաբար զարգացող ուժերի մասին, ուստի և սոցիոլոգների շրջանում միշտ էլ գոյություն է ունեցել որոշ արհամարհանք իրավունքի նկատմամբ և իրավագետները իրենց հերթին հավատալով կարգավորող նորմատիվ ակտերի ուժին հակված են եղել զանց առնելու սոցիոլոգների հետազոտությունները։ Սակայն ներկայումս այդ երկու բնագավառները մերձենում են, և սոցիոլոգներն ու իրավագետները եկել են այն եզրակացության, որ տեղի ունեցող սոցիալական պրոցեսների ամբողջական նկարագրությունը և բացատրությունը պահանջում են միավորել երկու տեսակետները»[6]։

Սովետական իրավագիտությունն իր ստեղծման պահից պետությունը, իրավունքը, դրանց ինստիտուտները և կատեգորիաները քննել է ամբողջ հասարակական կյանքի, պատմական մատերիալիզմի կողմից հետազոտվող հասարակական զարգացման օրենքների հետ սերտորեն առնչված։ Դրա շնորհիվ նա իր էությամբ եղել է սոցիոլոգիական և նրան հատուկ չի եղել այն արհամարհական վերաբերմունքը սոցիոլոգիայի նկատմամբ, որ նկատվում էր բուրժուական քրեական իրավունքի որոշ էտապներում։ Հատուկ սոցիոլոգիական տեսության մակարդակով սովետական հասարակության ամբողջ սոցիալական օրգանիզմի հետ իրավունքի փոխադարձ կապերի հետազոտությամբ զբաղվել է սովետական քրեական իրավունքի տեսությունը, որը հաջողությամբ լուծել և լուծում է իր առջև դրված խնդիրները։ Բայց իրավաբանական հետազոտություններում սոցիոլոգիայի նկատմամբ արհամարհական վերաբերմունքի իներցիան դրսևորվել է հետազոտությունների էլ ավելի ցածր մակարդակում՝ իրավունքի համապատասխան ճյուղերի առանձին կատեգորիաների, նորմերի և ինստիտուտների ուսումնասիրման մակարդակում։

Քրեական իրավունքում սոցիոլոգիական հետազոտությունների առարկայի և քրեական իրավունքի առարկայի հարաբերակցության քննությունն աներևակայելի է առանց սոցիոլոգիայի և իրավունքի առարկայի և դրանց հարաբերակցության բովանդակության պարզաբանման։

«Սոցիոլոգիան ուսումնասիրում է հասարակությունը՝ որպես սոցիալական հարաբերությունների, ինստիտուտների միմյանց հետ փոխգործակցող հասարակական խմբերի մի ամբողջական, կազմակերպված սիստեմ... որպես կենդանի, մշտական շարժման մեջ գտնվող սոցիալական օրգանիզմ»[7]։

Կոնկրետ սոցիոլոգիական հետազոտման մակարդակով սոցիոլոգները ուսումնասիրում են, թե «տնտեսության շոր կմախքը ինչպես է պատվում սոցիալ-քաղաքական ձևերի, իսկ հետո, և դա խնդրի ամենահետաքրքրական, ամենահրապուրիչ կողմն է, մարդկային գաղափարների զգացմունքների, ձգտումների և իդեալների կենդանի մարմնով»[8]։

Այսպիսով, կարելի է ասել, որ սոցիոլոգիան ուսումնասիրում է նախ՝ հա-

---

[6] Ян Щепаньский, Элементарные понятия социологии, М., 1969, стр. 12.

[7] А. М. Румянцев, Г. В. Осипов, Марксистская социология и конкретные социологические исследования («Вопросы философии», 1968, № 6, стр. 5).

[8] Г. В. Плеханов, Сочинения, т. 7, стр. 233—234.

սարակության անդամների օբյեկտիվ կապերը (սոցիալ-քաղաքական ձևերը), երկրորդ այդ կապերի արտացոլումը մարդկանց գիտակցության մեջ (մարդկային գաղափարները, զգացմունքները, ձգտումները և իդեալները)։ Իսկ վերջին հաշվով սոցիոլոգիայի կողմից ուսումնասիրվող երևույթների ամբողջությունը կարելի է բնորոշել որպես հասարակական հարաբերություններ։

Այս տեսակետից կարելի է միմյանց հետ համեմատել սոցիոլոգիայի և իրավագիտության առարկաները, քանի որ իրավունքը կանոնավորում և պաշտպանում է հենց հասարակական հարաբերությունները։ Այսպիսով, ուսումնասիրելով իրավունքը, իրավաբանական գիտությունները հետազոտում են ոչ միայն իրավական նորմերը որպես այդպիսիք, այլև այդ նորմերով արտահայտվող հասարակական հարաբերությունները։ Սակայն, իրավունքը և սոցիոլոգիան դրանք քննում են տարբեր ծավալներով և տարբեր տեսանկյուններից։ Իրավունքին հետաքրքրում է հասարակական հարաբերությունների մի սահմանափակ շրջանակ. «Իրավունքի օբյեկտն այն կամային հասարակական հարաբերություններն են, որոնց կանոնավորմամբ շահագրգռված են տիրապետող դասակարգը կամ ամբողջ ժողովուրդը և, որոնց կանոնավորումը իրավունքի կողմից հնարավոր է ըստ էության։ Նյութական, օբյեկտիվ, հասարակական-արտադրական հարաբերություններն անմիջականորեն կարգավորել իրավունքը չի կարող»[9]։

Իսկ սոցիոլոգիային, ընդհակառակն, հետաքրքրում են գլխավորապես մարդկանց սոցիալական նշանակալի, փաստական փոխհարաբերությունները հասարակության մեջ։ Դրա հետևանքով սոցիոլոգիան կարող է զբաղվել ինչպես այն հասարակական հարաբերությունների հետազոտմամբ, որոնք կարգավորված են իրավունքի կողմից, այնպես էլ այն հարաբերությունների հետազոտմամբ, որոնք իրավական կարգավորման ոլորտից դուրս են և իրավագիտության հետազոտման օբյեկտը չեն։

Այսպիսով, կարելի է առանձնացնել հասարակական հարաբերությունների որոշակի մի մաս, որը մտնում է սոցիոլոգիայի և միաժամանակ իրավունքի առարկաների մեջ, քանի որ այն կարգավորված է իրավական նորմերով։ Բայց հասարակական հարաբերությունների այդ մասը նույնպես, որը խաչաձևվում է սոցիոլոգիայի և իրավունքի ոլորտներով, այդ գիտությունները ուսումնասիրում են տարբեր դիրքերից։ Իրավագիտությանը առաջին հերթին հետաքրքրում են համապատասխան հասարակական հարաբերության օրենսդրությամբ սահմանված որոշակի ձևը, նրա սուբյեկտների իրավունքների և պարտականությունների բովանդակությունը։ Իսկ սոցիոլոգիան «ամեն մի մակարդակով միշտ պարզում է այս կամ այն հասարակական երևույթի սոցիալական գենեզիսը, սոցիալական տեղը և սոցիալական ֆունկցիաները»[10]։

Ամփոփելով վերը ասվածը, կարելի է եզրակացնել, որ իրավաբանական գիտությունը իրավունքի նորմերի հետ մեկտեղ ուսումնասիրում է իրավական հարաբերությունները, մինչդեռ սոցիոլոգիան ուսումնասիրում է մարդկանց փաստական հասարակական հարաբերությունները։

---

[9] «Общая теория советского права», под. ред. С. Н. Братуся и Н. С. Самощенко, М., 1966, стр. 16—17.

[10] Д. М. Угринович, О предмете марксистской социологии («Очерки методологии познания социальных явлений», М., 1970, стр. 44).

Սուբյեկտների իրավունքների ու պարտականությունների և իրավահարաբերությունների կառուցվածքում իրավազորությունների իրացմանն ուղղված նրանց փաստական վարքագծի ամբողջականության անխզելի միասնությունը հնարավորություն է տալիս, որ փաստական հարաբերություններն ուսումնասիրող սոցիոլոգիան թափանցի իրավահարաբերությունն ուսումնասիրող իրավունքի ոլորտը։ Բացի դրանից, ռեալ իրականության մեջ «իրավական հարաբերությունները անխզելիորեն կապված են տնտեսական, քաղաքական, կազմակերպական (այդ թվում կառավարչական), ընտանեկան և այլ հասարակական հարաբերությունների հետ, ասես միահյուսվում են դրանց հետ»[11]։

Վերը ասվածը հավասարապես վերաբերում է նաև իրավահարաբերության հատուկ տեսակին՝ քրեական իրավահարաբերությանը, որի կառուցվածքը նույնպես իրենից ներկայացնում է այդ հարաբերության սուբյեկտների իրավունքների ու պարտականությունների և դրանց հետ կապված փաստական հասարակական հարաբերության միասնություն։ Այս ամենը հիմք են տալիս ենթադրելու, որ իրավունքի, այդ թվում նաև քրեական իրավունքի սոցիոլոգիայի առարկան են նաև այն փաստական հասարակական հարաբերությունները (տնտեսական, քաղաքական, գաղափարական, ընտանեկան և այլն), որոնց հետ անխզելիորեն կապված են իրավահարաբերությունները։

Այսպիսով, իրավունքի մեջ սոցիոլոգիական հետազոտությունները թույլատրելի և օրինաչափ են, քանի որ դրանք քննում են իրավունքի առարկան կազմող կառուցվածքի տարրերից մեկը։

Իրավունքի սոցիոլոգիայի խնդիրը պետք է լինի ուսումնասիրել համապատասխան իրավահարաբերություններին հարաբերակցվող փաստական հասարակական հարաբերությունները, բուն իրավահարաբերությունները և դրանց հիմքում ընկած իրավական նորմերը՝ դրանց փոխադարձ կապով ու կախվածությամբ հանդերձ։

Փաստական հասարակական հարաբերությունների, իրավահարաբերությունների և իրավական նորմերի փոխադարձ կապերի ողջ բազմազանությունը, վերջին հաշվով, կարելի է հանգեցնել իրավական սահմանումների ծագման ու գործունեության ընդհանուր պրոբլեմատիկայի մեջ երկու տեսանկյունների՝ իրավական նորմերի սոցիալական հիմնավորվածության պրոբլեմին և իրավունքի, նրա ինստիտուտների ու նորմերի սոցիալական արդյունավետության պրոբլեմին[12]։

Իրավական նորմերի սոցիալական պայմանավորվածության պրոբլեմը ներառում է այն հարցերի հետազոտումը, թե իրավական նորմերը համապատասխանո՞ւմ են արդյոք իրերի փաստական իրավիճակին, նպաստո՞ւմ են արդյոք այն հասարակական հարաբերություններին, որոնց կարգավորման համար իրենք ստեղծված են, և այլ հարցեր։

Իրավունքի համապատասխան ճյուղի համար այդ հետազոտությունների կարևորությունը դժվար է գերագնահատել։ Դրանք ամենից առաջ պահանջում են ամբողջությամբ վերցված իրավունքի տվյալ ճյուղի, նրա նորմերի ու ինստիտուտների կողմից կարգավորվող փաստական հասարակական հարա-

---

11 «Общая теория советского права», стр. 279.

12 В. Н. Кудрявцев, նշվ. աշխ., էջ 67—70։

բերությունների իրապես գոյություն ունեցող վիճակի ընդարձակ վերլուծություն։ Այդ հարաբերությունները, ինչպես և բոլոր հասարակական հարաբերությունները, չէն կարող լինել անփոփոխ, ուստի դրանց հետազոտությունների ընթացքում ի հայտ են բերվում ոչ միայն արդի վիճակը, այլև զարգացման միտումները։ Նման վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել գործող իրավական սահմանումների սոցիալական հիմնավորվածության աստիճանը, տվյալներ ստանալ իրավունքի համապատասխան ճյուղի զարգացումը կանխագուշակելու համար, նրա ինստիտուտների և նորմերի փոփոխման կամ ստեղծման համար։

Իրավունքի սոցիալական հիմնավորվածության պրոբլեմից պակաս կարևոր չէ ընդհանուր առմամբ իրավունքի, նրա ճյուղերի, առանձին ինստիտուտների կամ նորմերի սոցիալական արդյունավետության պրոբլեմը։

Ամեն մի սոցիալական կառուցվածքի, այդ թվում նաև իրավական սահմանումների արդյունավետությունը, ըստ երևույթին, այն ֆունկցիաների կատարման աստիճանն է, որ ունի տվյալ կառուցվածքը՝ որպես միասնական սոցիալական օրգանիզմի մի մաս։ Այդ ֆունկցիաների իրականացման սոցիալական նշանակությունը և աստիճանը, ըստ երևույթին, անհնար է որոշել որպես մի ամբողջական օրգանիզմ հասկացվող ողջ սոցիալական սիստեմի հետ նրանց կապերից դուրս։ Այսպիսով, իրավական սահմանումների արդյունավետության որոշումը պահանջում է հասարակական օրգանիզմի մյուս սոցիալական օբյեկտների՝ իրավունքի հետ ունեցած փոխգործողության հետազոտում, որը բնորոշ է սոցիոլոգիայի առարկային։

Գրականության մեջ արդեն արտահայտվել է այն կարծիքը, որ իրավունքի արդյունավետությունը «անհնար է ուսումնասիրել բուն իրավունքի շրջանակներում, քանի որ նրա արդյունավետությունը արտահայտվում է, վերջին հաշվով, ոչ հենց իրավական երևույթների, մարդկանց փաստական հարաբերությունների վրա ունեցած ներգործությամբ»[13]։ Ուստի, իրավական նորմերի, ինստիտուտների և ամբողջությամբ վերցված իրավունքի սոցիալական արդյունավետության ուսումնասիրումը առավելապես սոցիոլոգիայի խնդիրն է, քանի որ այն դուրս է դալիս իրավունքի առարկայի սահմաններից՝ նրա ավանդական իմաստով և չի ընդգրկվում սոցիոլոգիական հետազոտությունների առարկայի մեջ։

Իրավական նորմերի և ինստիտուտների արդյունավետության ուսումնասիրման արդի վիճակը իրավունքի տարբեր ճյուղերում միատեսակ չէ։ Որոշ իրավական գիտություններում, օրինակ՝ աշխատանքային իրավունքում, այն նոր է սկսվում, մինչդեռ իրավունքի այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են քրեականը և ուղղիչ-աշխատանքայինը, երկար ժամանակ է, ինչ զբաղվում են այդ հետազոտություններով։ Մեր կարծիքով, այս առումով միատեսակ չպետք է լինի իրավունքի սոցիալական արդյունավետության ուսումնասիրման տեղի հարցի լուծումը։ Հանցավորության, դրա պատճառների և կանխման ուսումնասիրման սոցիոլոգիական տեսանկյունները, որոնք չեն ընդգրկվում քրեական և ուղղիչ-աշխատանքային իրավունքի հետազոտման առարկայի մեջ, ներկայումս կենտրոնացված են ինքնուրույն գիտության՝ քրեաբանության մեջ, քանի որ իրավունքի այդ ճյուղերի ինստիտուտների և նորմերի արդյու-

13 Նույն տեղում, էջ 69։

նավետությունը բավարար ճշտությամբ չի կարող ուսումնասիրվել դրանցից յուրաքանչյուրի իրավական կարգավորման առարկայի շրջանակներում։

Քրեական իրավունքի սոցիոլոգիայի հասկացության բնորոշման մեջ տարաձայնություններ չկան միայն այն հարցում, որ քրեաիրավական հետազոտությունների այդ տեսակը չի կազմում ինքնուրույն առարկա կամ հասարակագիտության ճյուղ, այլ խորացնում և ընդլայնում է ավանդական պրոբլեմատիկան՝ քրեական իրավունքի ընդհանուր առարկայի շրջանակներում[14]։ Սակայն հետազոտողներից յուրաքանչյուրը քրեական իրավունքի սոցիոլոգիայի առարկայի բովանդակության մեջ մտցնում է տարբեր ծավալի պրոբլեմներ։ Այսպես, Ն. Կուդրյավցևը գտնում է, որ քրեական իրավունքի սոցիոլոգիայի պրոբլեմատիկան բացահայտվում է իրավունքի սոցիալական պայմանավորվածությամբ և իրավունքի սոցիալական արդյունավետությամբ[15]։ Ա. Յակովլևի կարծիքով, իրավունքի սոցիոլոգիան պետք է ուսումնասիրել այն մարդկանց վարքագծի օրինաչափությունների հետազոտման միջոցով, ովքեր՝ 1. ընդունում են օրենքները, 2. կիրառում են օրենքները, 3. որոնց վարքագծի վրա անդրադառնում են իրավունքի նորմերը[16]։

Քրեական իրավունքի սոցիոլոգիայի առարկայի բովանդակությունը այլ կերպ է բնորոշում Պ. Դագելը։ Նա գրում է. «քրեական իրավագիտությունը չի կարող բավարարվել ընդհանուր տեսության մակարդակով՝ սոցիոլոգիական մեթոդի օգտագործմամբ, նա պետք է ուսումնասիրի նաև քրեաիրավական ինստիտուտների և նորմերի ռեալ կացությունը, դրանց ռեալ ներգործությունը հասարակական հարաբերությունների վրա»[17], որն իր հերթին աներևակայելի է առանց քրեաիրավագիտության կողմից հետազոտությունների կոնկրետ սոցիոլոգիական մեթոդների օգտագործման։

Քրեական իրավունքի սոցիոլոգիայի առարկայի բովանդակությունը առավել մանրամասն հետազոտվել է Ն. Կուղնեցովայի աշխատություններում։ Նա գտնում է, որ քրեական իրավունքի սոցիոլոգիական հետազոտությունների խնդիրը պետք է լինի ուսումնասիրել հետևյալ պրոբլեմները. 1. իրավագիտակցության սոցիոլոգիան քրեական իրավունքի բնագավառում, 2. քրեական օրենքի սոցիոլոգիան, 3. քրեական իրավունքի ընդհանուր մասի ինստիտուտների սոցիոլոգիան, 4. վիկտիմոլոգիայի սոցիոլոգիան, 5. քրեական պատժի և այն փոխարինող միջոցների հիմնավորվածությունն ու արդյունավետությունը, 6. քրեական պատասխանատվությունից ազատելու և պատժելու ինստիտուտների սոցիալական նշանակությունը և արդյունավետությունը,

---

[14] *Ավելի մանրամասն տե՛ս.* Н. Ф. Кузнецова, Социологические проблемы уголовного права («Проблемы социологии права», вып. I, Вильнюс, 1970, стр. 120—124).

[15] В. Н. Кудрявцев, Право и социальная действительность («Научная информация по вопросам борьбы с преступностью», № 25, М., 1970).

[16] А. М. Яковлев, Концептуальные проблемы конкретно-социологических исследований в праве («Научная информация по вопросам борьбы с преступностью», № 25, М., 1970), *նույնի՝* Преступность и социальная психология, М., 1971, стр. 214—234.

[17] П. С. Дагель, Социологические методы в уголовном праве в связи с размежеванием уголовного права и криминологии («Ученые записки Дальневосточного государственного университета», вып. 41 (серия юридическая), Владивосток, 1970, стр. 89).

7. քրեաիրավական կանխագուշակումը. 8. քրեական օրենսդրության հատուկ մասի կիրառման սոցիոլոգիական պրոբլեմները[18]։

Դժվար չէ նկատել քրեական իրավունքի սոցիոլոգիայի առարկայի բովանդակության վերաբերյալ հայացքների մեջ եղած տարբերությունները։ Մեր կարծիքով, այդ տարբերությունները կապված են ամենից առաջ այն բանի հետ, որ վերը նշված հետազոտողներից ոչ ոք (բացի Վ. Կուդրյավցևից) չի փորձել քննության առնել այն հարցը, թե ինչը կարող է մտցվել քրեական իրավունքի սոցիոլոգիայի առարկայի մեջ, և ինչն է դուրս գալիս նրա շրջանակներից՝ ելնելով սոցիոլոգիայի առարկայի և քրեական իրավունքի առարկայի հարաբերակցության դիրքերից։ Այդ կապակցությամբ Ն. Կուզնեցովայի նշած քրեաիրավական հետազոտությունների պրոբլեմատիկայի մի մասը ուղղակի փոխ է առնված քրեաբանությունից (քրեական իրավագիտակցության, վիկտիմոլոգիայի, կանխագուշակման պրոբլեմը)։ Բացի այդ, Ն. Կուզնեցովան վերոհիշյալ պրոբլեմատիկան ամբողջությամբ վերցրած քննում է որպես քրեաիրավական նորմերի և ինստիտուտների միայն արդյունավետության ուսումնասիրման ընդհանուր պրոբլեմ։ Մինչդեռ վերջինիս մեջ մտնում են քրեական իրավունքի թե՛ սոցիալական հիմնավորվածության և թե սոցիալական արդյունավետության հարցերը։

Այսպիսով, քրեական իրավունքի սոցիոլոգիան քրեական իրավունքի մեջ գիտագործնական հետազոտությունների այն բնագավառն է, որը բացահայտում է քրեաիրավական սահմանումների սոցիալական ակունքները, բովանդակությունը, սոցիալական հիմնավորվածությունը և արդյունավետությունը։ Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ քրեական իրավունքի սոցիալ-իրավական հետազոտությունների առարկայի ծավալը չի գերազանցում քրեական իրավունքի առարկայի ծավալին։ Սա փաստարկներից մեկն է հօգուտ այն բանի, որ քրեական իրավունքի պրոբլեմների սոցիալ-իրավական հետազոտություններով պետք է զբաղվի քրեական իրավագիտությունը։ Սակայն այս հարցի վերջնական լուծումը անհնար է առանց քրեական իրավունքի և քրեաբանության սահմանազատման, քանի որ երկուսն էլ սոցիոլոգիական մեթոդներով են հետազոտում հանցագործությունների դեմ մղվող պայքարի հարցերը։

Քրեական իրավունքի և քրեաբանության հարաբերակցության հարցը երկար պատմություն ունի սովետական իրավագիտության մեջ։ Այսօրվա դրությամբ այն հնարավոր կլիներ համարել համապատասխան գիտական հայացքների և հայեցակետերի զարգացման պատմություն, եթե չլիներ հանցավորության սոցիալ-իրավական հետազոտությունների զարգացումը, որը նորովի է դնում այդ հարցը։ Ներկայումս անհրաժեշտություն է ծագում առաջադրել քրեական իրավունքում քրեաբանության և սոցիոլոգիական հետազոտությունների սահմանազատման հարցը։ Հանցագործությունը քննության առնելով որպես սոցիալական երևույթ, քրեաբանությունը սահմանում է նրա տեղը սոցիալական իրականության մյուս գործոնների մեջ՝ վերցնելով դրանք փոխադարձ կապով և կախվածությամբ որպես մի միասնական սոցիալական օրգանիզմ։ Քրեաբանությունը, ինչպես և քրեական իրավունքը, ուսումնա-

---

18 Н. Ф. Кузнецова, նշվ. աշխ., էջ 121, նույնի՝ Проблемы изучения эффективности уголовно-правовых норм и институтов («Эффективность применения уголовного закона», М., 1973. стр. 27—52).

սիրում են հանցավորությունը և իրենց հետազոտություններում հենվում են հանցագործության, պատժի և այլ քրեաիրավական հասկացությունների ոլորտ։ Քրեարանության առաջադիմիկ գիծն այն է, որ նա «հանցավորությունը, նրա կառուցվածքը և դինամիկան ուսումնասիրում է իրրև փաստական առկայություն և զբաղվում է հանցավորության իրավական գնահատությամբ»[19]։

Այսպիսով, հանցավորության՝ իրրև սոցիալական երևույթի, սոցիոլոգիական հետազոտմամբ զբաղվող քրեարանությունը չի կարող, որպես այդպիսին, լրիվ քրեական իրավագիտության մի մասը։ Սակայն քրեական իրավագիտության և քրեարանության այս սահմանազատումը չի՞ նշանակում արդյոք, որ քրեաիրավական պրոբլեմների հետազոտման սոցիոլոգիական մեթոդները նույնպես պետք է վերագրվեն քրեարանությանը։ Այս հարցի դրական պատասխանը անհիմն է թվում երկու պատճառով։ Նախ՝ քրեական իրավունքը օգտվում է այնպիսի կատեգորիաներից, որոնց կոնկրետ բովանդակության սահմանումը անհնար է առանց սոցիոլոգիական հետազոտությունների (օրինակ՝ հասարակական վտանգավորության կատեգորիան)։ Դրա հետևանքով քրեական իրավագիտության տարկայից անհնար է բացառել նրա օրգանական մասը՝ քրեաիրավական նորմերի և ինստիտուտների սոցիալական բովանդակության սահմանումը։ Երրորդը՝ քրեական իրավունքի մեջ սոցիոլոգիական հետազոտությունները նպատակ ունեն սահմանել երևույթի սոցիալական բովանդակության և նրա իրավական ձևի փոխադարձ կապը։ Իսկ քրեարանությանը հետաքրքրում են ավելի բարձր կարգի իրադարձություններ, որոնց հետազոտման ժամանակ իրավական երևույթը քննվում է ոչ թե նրա ներքին կառուցվածքի տեսանկյունից, այլ որպես սոցիալական իրականության գործոն, որը փոխադարձաբար կապված և փոխադարձ կախման մեջ է սոցիալական օրգանիզմի մյուս աստիճանների հետ։ Այս առումով քրեարանության ինքնուրույն գործունեությունը չի բացառում սոցիալ-իրավական հետազոտությունների հնարավորությունը քրեական իրավունքում։

Այսպիսով, սովետական քրեական իրավագիտության առարկան իր կառուցվածքով կանխորոշում է քրեական իրավունքի շրջանակներում սոցիոլոգիական հետազոտությունների անհրաժեշտությունն ու հնարավորությունը, իսկ քրեարանության ինքնուրույն գոյությունը և զարգացումը խոչընդոտներ չի ստեղծում դրա համար։

МЕСТО СОЦИОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ УГОЛОВНОГО ПРАВА В СИСТЕМЕ НАУК, ИЗУЧАЮЩИХ ПРЕСТУПНОСТЬ

ОНИК ГАЛИКЯН

Резюме

Применение социологических исследований системой наук, изучающих преступность, является одним из наиболее эффективных средств научной разработки проблем, стоящих перед этими науками. Проведение социологических исследований как уголовным правом, так и криминологией правомерно.

---

[19] М. И. Ковалев, նշվ. աշխ., էջ 85։

В круг проблем уголовного права, подлежащих социологическому исследованию, должны быть включены: проблема социологической обоснованности уголовно-правовых норм, а также проблема социальной эффективности уголовно-правовых институтов и норм.

Исходя из того, что криминология как наука, изучающая преступность, имеет свои специфические объекты исследования и они выходят за пределы объектов уголовного права, криминология не может быть признана частью или отраслью уголовного права.